**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/8-01-1**
**Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնման № «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/8-01» պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

ք.Երևան «13» մարտի 2014 թ

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ն, ի դեմս աշխատակազմի ղեկավարի՝ Դ. Գասպարյանի, որը գործում է Խորհրդի նախագահ Ռ. Ջաղինյանի կողմից 21.01.2014թ. արձակված N 07 հրամանի հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Տոնէքս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Շաբաբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով կողմերի միջև 11.03.2013թ. կնքված Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնման № «ՀՀՀՌ-ՇՀԱՊՁԲ-11/8-01» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթներով, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրում կատարվում են հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1. Պայմանագրի 9.3. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«9.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ: Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝
ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.
բ) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:»:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Պայմանագրի՝ սույն համաձայնագրով չփոփոխված դրույթները մնում են անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներիցմեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:
5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ | «Տոնէքս» ՍՊԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 | ք. Երևան, Ն.Զարյան 22. տար. 6 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Էյչ-Էյ-Բի-Սի» Բանկ Հայաստան ՓԲԸ |
| Հ/Հ 900011430163 | Հ/Հ 217002182715001 |
| հվհհ 01539597 | հվհհ 01401171 |
| Էլ. փոստ syune@cptvrc.am | Էլ. փոստ info@tonex.am |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| Դ. Գասպարյան | Ա. Շաբաբյան |